Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2016 թվականի հոկտեմբերի 24-ի գրության՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N62-Ն որոշմամբ սահմանվել է նախարարի, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի ղեկավարի խորհրդականների, մամուլի քարտուղարի, օգնականների և ռեֆերենտների, ինչպես նաև նախարարի տեղակալների օգնականների թիվը: ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի համար սահմանվել է 4 խորհրդականի, 1 մամուլի քարտուղարի և 2 օգնականի պաշտոն:

Ըստ այդմ, ստորև ներկայացնում ենք Ձեր հարցերի պատասխանները.

1. ***Քանի՞ խորհրդական և օգնական ունի ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարը***:

Ներկայումս ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարն ունի երեք խորհրդական, այդ թվում՝ մեկ գլխավոր խորհրդական, մեկ օգնական, ինչպես նաև մամուլի քարտուղար:

2. ***Նրանցից քանի՞սն են հասարակական հիմունքներով և քանի՞սը վճարովի հիմունքներով:***

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարը չունի հասարակական հիմունքներով նախարարի խորհրդական և օգնական:

3. ***Որքա՞ն է կազմում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի՝ յուրաքանչյուր խորհրդականի և օգնականի աշխատավարձը:***

«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ նախարարի գլխավոր խորհրդականը վարձատրվում է 380305 ՀՀ դրամ ամսական աշխատավարձով, խորհրդականները՝ յուրաքանչյուրը 363770 ՀՀ դրամ ամսական աշխատավարձով, նախարարի օգնականը և մամուլի քարտուղարը՝ 297630 ՀՀ դրամ ամսական աշխատավարձով:

Տեղեկատվությունը տրամադրվել է նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության կողմից:

Հարգանքով՝ Անահիտ Խեչոյան

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
Հասցե՝ 0010 ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
Հեռախոս՝ (+374 11) 597-210, (+374 11) 597-211, (+374 11) 597-212
էլ.փոստ՝ press@mineconomy.am
Կայք՝ www.mineconomy.am
Ֆեյսբուք՝ Press Mineconomy, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն